



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ա. ԿԱՐԳԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ**

Ազգային Առաջնորդարանի ընդհանրապես հանդարտ ու խաղաղ շրջափակը Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի կեսօրուան մօտ մանկական ճրուղիլիններով կենսաւորուեցաւ, երբ հոն ժամանեցին Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի Ա. Կարգի աշակերտները, ընկերակցութեամբ իրենց ուսուցիչներուն, ծնողներու եւ վարժարանի Հայկական Ակումբի անդամներուն:

Աշակերտները Ազգային Առաջնորդարան հրաւիրուած էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ, որ վերամուտի առիթով մեր վարժարանները իր այցելութեանց ծիրին մէջ, հանդիպում ունեցած էր նաեւ այս դասարանի աշակերտներուն հետ ու զանոնք հրաւիրած էր Առաջնորդարանիս նորակառոյց շէնքը:

Դեռատի մանուկներուն հետաքրքիր աչուկները կը մատնէին, թէ ասիկա դպրոցի շրջափակէն դուրս ուշագրաւ պտոյտ մըն էր իրենց համար: Ուսուցիչներուն ու ծնողներուն առաջնորդութեամբ, անոնք նախ խմբուեցան Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատուռ»ին մէջ, ուր զիրենք ընդունեց Առաջնորդ Սրբազանը, ընկերակցութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչներուն՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի ու Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի: Միասնաբար Տերունական Աղօթքը կատարելէ ետք, Առաջնորդ Սրբազանը ողջունեց աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները, ապա, մանուկներուն ուղղուած հարցումներով, բացատրութիւններ տուաւ Աստուծոյ Տան եւ իրենց անունը մատրան շնորհած սուրբերուն մասին:

Այնուհետեւ, մանուկները առաջնորդուեցան «Տիգրան եւ Չարուհի Տեր Դազարեան» սրահը, ուր շարունակուեցաւ մտերմիկ հանդիպումը: Հայկական Ակումբի ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին համար ունէին նուէր մը. նմանապէս՝ դեռատի աշակերտները, որոնք իրենց գծանկարներով պատրաստուած պաստառ մը բերած էին իբրեւ յուշանուէր:

Առաջնորդ Սրբազանին շնորհակալութեան ու օրհնութեան խօսքերէն ետք, երկու Հայր Սուրբերը աշակերտներուն որոշ բացատրութիւններ տուին քրիստոնէական մեր հաւատքին ու Ազգային Առաջնորդարանին մասին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, դեռատի հիւրերուն ու անոնց ընկերակիցներուն վերապահած էր յատուկ նուէրներ՝ տօնական օրերու յատուկ վիտօ-երիզներ ու Ազգ. Առաջնորդարանին մասին վաւերագրական ժապաւէններ:

Հրաժեշտէն առաջ, հիւրերը հաւաքական լուսանկար մը ունեցան Առաջնորդարանի մուտքին: Յետոյ, ճշուողիւնը մեկնեցաւ...

## **V. & A. CHAMLIAN FIRST GRADE STUDENTS VISIT THE PRELACY**

On the morning of Tuesday, October 30<sup>th</sup>, first grade students of Vahan and Anoush Chamlian School visited the Prelacy accompanied by their teachers, parents, and Armenian club members. The students had been invited by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, during his visit to the school at the start of the new academic year.

Under the supervision of their teachers and parents the students gathered in the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where they were greeted by the Prelate and Christian Education Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian. Following the Lord’s Prayer the Prelate welcomed the students and imparted information to them about the Chapel and the Saints after which it is named.

The students were then escorted to “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where members of the Armenian club offered the Prelate a memento, a poster of their collective drawings. The Prelate offered his thanks and blessings, after which the two Rev. Fathers gave further explained to the students about our Christian faith and the activities of the Prelacy. At the conclusion of the visit, the Prelate presented the students with religious videos and a DVD of the Prelacy’s history.